

ԻՐԱՋՖԵՆՈՒԱԼԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԳԵՈՐԳԻ III-Ի ԺԱՄԱՆԱԿ
ԵՎ ՔՈՒՐԴ ԱՄԻՐԱՊԵՏԸ

Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Դասակարգային և ներդասակարգային պայքարը ավատատիրական հասարակարգի զարգացման բնորոշ կողմերից էր, արժանի հանգամանակից ու համակողմանի ուսումնասիրության: Հակամարտությունն ու պայքարը ոչ միայն ավատատերերի ու գյուղացիների միջև, այլև հենց տիրապետող դասակարգի ներսում՝ թագավորական իշխանության և խոշոր ավատատերերի, պետության և եկեղեցու միջև, միջնադարյան ավատատիրությանը յուրահատուկ երևույթ էր: Ներդասակարգային պայքարի արտացոլումն էր այն հարատև մրցակցությունը, որը մղվում էր ավատատերերի որոշ խմբակցությունների ու տոհմերի, ինչպես նաև առանձին իշխանների միջև՝ հանուն իրենց տնտեսական ու քաղաքական գիրքերի ամրապնդման, նոր տիրույթների ու պալատական պաշտոնների ձեռքբերման: Արքունի գործակալությունների պետերը, հատկապես հզոր կենտրոնական իշխանության առկայության պայմաններում, քաղաքական ազդեցիկ դիրքի տիրանալուց բացի, իրենց վարած պաշտոնների դիմաց ստանում էին նոր կալվածքներ ու ձգտում էին ժառանգական դարձնել նվաճված քաղաքական ու տնտեսական բարձունքները: Որոշ իշխանական տոհմերի բարձրացումը կամ անկումը անխզելիորեն կապված էր արքունի պաշտոնների ձեռքբերման կամ կորցնելու հետ, հետևաբար, նաև այդ ընտանիքներին պատկանող գավառների պատմության հետ: Ուստի, երկրի կյանքում ակնառու դեր խաղացած իշխանական տների, նրանց փոխհարաբերությունների, նոր տոհմերի սկզբնավորման ու հզորացման, նրանց պատկանող պաշտոնների ու կալվածքների, ավատատիրական դասակարգի ներսում տեղի ունեցող պայքարի ու փոփոխությունների ուսումնասիրությունը կարևոր է և ուշագրավ: Վերոհիշյալ հարցերի հետազոտությունը նշանակալիորեն կարող է նպաստել միջնադարյան Հայաստանի և Վրաստանի սոցիալ-քաղաքական պատմության մի շարք կարևոր հարցերի լուսաբանմանը:

ԺՌ դարի առաջին քառորդում, երբ Վրաստանը Դավիթ Դ Շինոզի (1089—1125) օրոք հաղթական պատերազմներ էր մղում՝ Անդրկովկասից հալածելով սելջուկ թուրքերին, Հյուսիսային Հայաստանի զգալի մասն անցավ վրացական պետությանը¹: Իր ռազմա-ստրատեգիական առանձնահատուկ դիրքի շնորհիվ այս տարածքը հենակետ էր ծառայում Վրաստանի համար՝ հետագայում Գեորգի Գ-ի (1156—1184) և Թամար թագուհու (1184—1210) իշխանության տարիներին դեպի հարավ առաջխաղացումը շարունակելիս: Բազմաթիվ բերդերը՝ Կայանը, Կայծոնը, Գազը, Ագարակը, Նոր-բերդը, Մահկանաբերդը

¹ Հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 89—96:

և այլն, առանձնապես կյուրիկյաններին ախիկին մայրաքաղաք Լոռեն, երկրամասը պաշտպանական պատվար էին դարձնում հարավում² 1118 թ. Լոռեն պատկանում էր Օրբելի իշխաններին³ և հիմք դարձավ նրանց հետագա հզորացման և անկախանալու նկրտումների համար։ ԺԲ դարի 70-ական թվականներին Լոռեն արդեն դիտվում էր իբրև վրաց ամիրսպասալարի տիրույթ և, մինչև Զաքարյանների ժառանգական կալվածք դառնալը, սովորաբար, նրան էր հանձնվում ծառայության դիմաց։ Այսպես, Իվանե ամիրսպասալար Օրբելու գլխավորած խոշոր ավատատերերի ապստամբության (1176—1177) պարտությունից հետո Գևորգի Գ-ն ամիրսպասալարության պաշտոնը հանձնեց ապստամբության ճնշման գործում մեծ վաստակ ունեցող խուրասարին և նրան շնորհեց Օրբելիների տիրույթների մեծ մասը, այդ թվում և Լոռեն⁴։ Թամար թագուհու գահակալության առաջին տարում, երբ մեծատոհմիկ աղանդականությունը պահանջում էր պաշտոնանկ անել խուրասարին, թագուհին թեև խուրասարին ցմահ թողեց իր տիրույթները, սակայն ստիպված էր նրանից վերցնել ամիրսպասալարության պաշտոնը և հետո էլ, բնականաբար, Լոռեն⁵։ Ամիրսպասալարության պատիվը անբաժան էր պատկերացվում Լոռեի տիրակալությունից, այս է պատճառը, որ պետական վերափոխումների ծրագրով հանդես եկող Ղութլու Արսլանը Թամար թագուհու առաջին պատմիչի կողմից բնութագրվում է իբրև «ամիրսպասալար [դառնալու] և Սոմխիթում, հայոց թագավորի տեղում՝ Լոռեում, նստելու պատրաստվող»⁶։

Ինչպես երևում է, Օրբելիները իրենց տիրույթները ժառանգական սեփականություն դարձնելու համար եռանդուն պայքար էին մղում դեռևս Դեմետրե Ա-ի (1125—1156) ժամանակ, որը չէր կարող շառաշացնել թագավորական իշխանության անհանգստությունը: Իրոք, աղբյուրների քննությունից երևում է, որ 1155 թ. պալատական հեղաշրջման հետևանքով՝ գահ բարձրացած Դավիթ Ե-ն վարում էր Օրբելիների հզորացումը սահմանափակելու քաղաքականություն: Նոր արքան ամիրսպասալարության պաշտոնը Օրբելիներից խլելով՝ հանձնեց Թիրքաշ Աբուլեթիսսինին⁸: Սա, անշուշտ, պատահական ընտրություն չէր: Ե՛վ Օրբելիների, և՛ Աբուլեթիսսինների տոհմերն իրենց բարձ-

² ქ. ჩხატარაიშვილი, უცხოელები XII საუკუნის საქართველოს ლაშქარში („სა-
ართველო ოჟსთაველის ხანაში“, თბ., 1966, გვ. 171).

³ ქართლის ცხოვრება, ტ. I, თბ., 1955, გვ. 335; შა. ორბელიანი, ღათამილქიანი სარანგის სიასიანი, ზიქიქი, 1910, ლ. 379.

¹ Մտ. Օրբելյան, Նշվ. աշխ., էջ 391. լատիշական լեզվով, Ե. 11. տ. 1959, գ. 30: Հոսեին վերաբերող մասնագիտական դրականություն. Լ. Մելոյան - Ս. Բ. Բ., «Ին-
դուստրիալ ճարտարապետության մոդելներ» և միջին դարեր, տ. 1928, գ. 36; Վ. Հարություն-
յան, Լուսինյան, Լուսինյանի ճարտար (Վ. Լուսինյան-Բանասիրական հանդես), 1962, № 3, էջ 57-76),
Խ. Լուսինյան, Քաղաքներ և արհեստներ Լայպտանիում 9-13-րդ դարերում, հ. 2,
Երևան, 1964, էջ 83-90) հուրապա արհեստները Լայպտանիումից չեն հեռացվում:

⁵ Ճ. Գ. Ծ. 11, թ. 30: Պետք է նշել, որ այս հատվածի հայերեն թարգմանությունը (Լ. Մ. Լիբսոս-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 11) ճշտությամբ չի հաղորդում վրացերեն բնագրի իմաստը:

⁶ յ. Յ., Ծ. II, 83. 31, նաև Լ, Մ և Ի քսեթ - բեկ, նշվ. աղբւ., էջ 11.

⁷ რ. მეტრეველი, შინაკლასობრივი ბრძოლა ფეოდალურ საქართველოში (XII საუკუნე), თბ., 1973, გვ. 115—118.

⁸ Վ ա Ր Ղ ա ն, Պատմութիւն տիեզերական, Մասկվա, 1861, էջ 165:

հալ իշխանները. նրանցից ոմանք գտնվում էին Օրբելիների գլխավորությամբ ապստամբած ավատատերերի շարքերում, ոմանք էլ մասնակցում էին այդ ապստամբության ճնշմանը: Հյուսիսային Հայաստանի իշխողների մեծ մասի հանգես գալը հագուտ Օրբելիների արդյունք էր վերջիններիս և նրանց միջև դուրսից ունեցող հարաբերությունների բնույթի և սերտ կապի: Քարթլիս ցխովրեբայի» մի տեղեկությունից պարզվում է, որ ապստամբության սկզբում Օրբելիների բանակում էր գտնվում նաև Սարգիս Զաքարյանը, որը հետո թագավորի կողմը անցավ: Որդու և եղբորորդու հետ, Օրբելիների եղբայրը և սիրելին»¹⁵, այսինքն՝ Օրբելիների վասալ Զաքարյանները բռնել էին իրենց սյուզերենի կողմը: Վասալի և սյուզերենի նմանօրինակ հարաբերություններ կային, հավանաբար, նաև Ստ. Օրբելյանի հիշատակած «Տաշրացի»-ների¹⁶ (այսինքն՝ Տաշիրի իշխանների) և Օրբելիների միջև: Հայտնի է, որ վերջիններս խնամիական կապերով կապված էին Լոռիի Կյուրիկյանների հետ, իվանե Օրբելիի կինը՝ Ռուսուդանը, Կյուրիկե Բ-ի (1145—1185) դուստրն էր¹⁷: Սակայն, ինչպես Ստ. Օրբելյանի վկայության վրա հիմնվելով ենթադրում է Հ. Մանանդյանը, այս խնամությունը երկու տոհմերի միջև կարող էր սկսված լինել ավելի վաղ, դեռ ԺԲ դարի սկզբում¹⁸: Այս տեսակետից ուշագրավ է նաև իվանե Օրբելու Սանահյնի արձանագրությունը, «եւ՝ Օրբելեան Իւանէ սպասալարս... ըստ նախնեաց սուրբութեան եկի ուխտ Սանահին... տեսի զյիշատակս նախնեաց մեռոց...»¹⁹, որը ևս կարող է համարվել Օրբելիների և տեղական միջավայրի սերտ կապի վկայություն: Սակայն, եթե Օրբելիների վասալները ապստամբությանը մասնակցում էին հույս ունենալով հաղթանակի դեպքում նոր կալվածքներ և պաշտոններ ստանալ, ապա Հյուսիսային Հայաստանի իշխաններից ոմանք անցան հակառակ բանակը, «Քանզի որք երթային առ Գեորգի՝ մեծաւ պատուով ընդունէր և անշափ պարգևօք խրախացուցանէր, և զամենայն հայրենիս և փարթամութիւնս Օրբելեանց խոստանայր տալ նոցա»²⁰: Ապստամբության սկզբում թագավորը ստիպված էր փախչել Թբիլիսի և ապստամբների դեմ պայքարելու համար զորք հավաքել, հավանաբար, այդ ժամանակից սկսած նրա գլխավոր օգնականներից մեկը դարձավ և հետագայում աչքի ընկնող ծառայություն մատուցեց Քարեպաշտ ամիրապետն Տրփխեաց՝ Քուրդն անուանեալ», որը Մահկանաբերդի գավառում ջախջախեց Կա-

¹⁵ Զ. Գ., II, էջ 19: Հետաքրքիր է, որ Զաքարյանների այսօրինակ հաշվենկատ քաղաքականության մասին հայկական աղբյուրները լռում են, թեև, ինչպես նկատել է Գ. Հովսեփյանը (տե՛ս նրա «Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան», պրակ I, Երուսաղեմ, 1935, էջ 62), որոշ ակնարկներ, այսուհանդերձ, պահպանվել են:

¹⁶ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 384:

¹⁷ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 408—409; M. Brosset, Lettres de M. Bartholomaei, relatives..., Melanges Asiatiques, t. II, 3-e livr., St.-Pet., 1854, p. 297, հմտ. Գ. Մովսեսյան, Լոռիի Կյուրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923, էջ 66—69:

¹⁸ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 116:

¹⁹ Կ. Ղաֆազարյան, Սանահյնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 189: Ինչպես արդեն դիտված է (Վ. Յեղուկյան - Յեղուկյան, նշվ. աշխ., էջ 35, ծան. 4: Պ. Մուրադյան, Վրացիներն արձանագրությունները Հայաստանում, «Լրաբեր», 1966, № 3, էջ 36), այս արձանագրության թվագրությունը վերանայելի է, ՈԼԲ-ն (1183) անհրաժեշտ է սրբագրել ՈԻԲ-ով (1173), քանի որ արձանագրությունը 1177 թ. հետո չէր կարող գրվել:

²⁰ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 385:

յան ամրոցում ամրանալու փորձ անող լիպարիտ Օրրելուն²¹։ Այս նշանավոր անձնավորության, և առհասարակ նրա տոհմի գործունեությունը այնքան հետաքրքիր է, որ նրա կյանքի և ինքնության մանրամասն քննությունը ավելորդ չպետք է դիտվի։

Քննող իշխանի մասին առաջին տեղեկությունները քաղում ենք Մխիթար Գոշի «Աղվանից ժամանակագրությունից», ուր նա հիշվում է Գեորգի Գ-ի գահակալության հետ կապված դեպքերի կապակցությամբ։ Քուրդն իր եղբայրների հետ Դավիթ Ե-ի սիրելիներից էր. «յոթ մեծարէր պատուով զահապ քաղաքին Տըփսեաց՝ զՎասակ որդի Վահրամայ իշխանի և զեղբարս նորա զՋուրդն կոչեցեալ և զՍարգիս»²²։ Սակայն Գեորգի Գ-ի գահ բարձրանալուց և արքունիքում իրադրությունը փոխվելուց հետո, եղբայրները հարկադրված էին փախչել Կարին, որտեղ նրանց «խնդութեամբ և մեծարանօք» ընդունեց Սալդուխ ամիրան, «գի յորժամ ըմբռնեցաւ Սալտուխն ի զօրացն Վրաց, մինչ պաշարեալ էր զքաղաքն Անի և ածաւ առ թագաւորն Դեմետրէ ի Տփսիս, բազում սպասակալութիւն արարեալ էր նմա Վասակ. յաղագս այսորիկ պատուեալ զնոսա պարգեւօք և շնորհաց իշխանութիւն գիւղօրէից բաղմաց»²³։ Մխիթար Գոշի հիշատակած Անիի ճակատամարտը և Սալդուխի գերությունը տեղի է ունեցել 1153—1154 թթ.²⁴։ Հավաստի է նաև Վասակի և եղբայրների փախուստի մասին մատենագրի տեղեկությունը։ Ըստ Կիրակոս Գանձակեցու, Սև լեռան վարդապետների մոտ իր երկրորդ ուսումնառությունը ավարտելուց հետո Գոշը վերադարձի ճանապարհին Կարինում հանդիպել է Քուրդ իշխանին «որ ընդ այն ժամանակս անդ լինէր՝ սարտուցեալ ի թագաւորէն վրաց»²⁵։ Վասակի և իր եղբայրների փախուստը, հավանաբար, աչքի ընկնող իրադարձություն է դիտվել, քանի որ ընդամենը մի քանի տարի անց, այս մասին արդեն դիտեր Կիլիկիայում ապրող Գրիգոր Նրեցը։ Պատմելով 1160 թ. հոկտեմբերին Շահ-Արմենի աներոջ՝ Ատրատինի և վրաց զորքերի միջև Օլթիի զավառում տեղի ունեցած ճակատամարտի մասին, պատմիչը հետևյալն է հաղորդում. «Եւ ի հետ էին մնացեալ ի զօրացն թուրքին որդիք Մրուանայ, որք էին ի Վրաց տանէն՝ եկեալ առ թուրքն զկնի Վասակայ Վրացոց ուրացելոյ, որք էին առաջնորդեալ թուրք զօրաց»²⁶։ Այս ուշագրավ վկայությունում հիշվող Վասակը, հավանաբար, Մխիթար Գոշի «Աղվանից ժամանակագրությունից» հայտնի Թբիլիսիի շահապ Վասակն է։ Սա հավանական ենթադրություն է նախ այն պատճառով, որ Վասակ անունը վրաց մեջ տարածված չէ²⁷ և ապա՝ իժմար է ենթադրել, որ 1156—1160 թթ. միջև ընկած ժամանակամիջոցում²⁸ Վասակ անունով մի իշխան ևս կարող էր հեռանալ Վրաստանից և ապաստան

²¹ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 472, Վ. Հակոբյան, Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը (ՀՍՍՀ ԳԱ ՏՏԵԿԵԿԱԳԻՐ) (հայ. գիտ.), 1952, № 8, էջ 120)։

²² ՄՀԱԿԱՊԱՏՈՒՄ, հ. Բ, էջ 389։

²³ Նույն տեղում, էջ 389—390։

²⁴ ՈՅ. ՋԱՅՈՒՆՅԱՆ, Վանքի շրջանի ժողովրդական պատմություն, Երևան, 1965, ԶԳ. 225։

²⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Չանջանյանի, Երևան, 1961, էջ 208։

²⁶ Մատթիէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 425։

²⁷ Մարգարյանի ցիտավորումը, օրինակ, այն ոչ մի անգամ չի հիշատակվում։

²⁸ Ենթադրելի է, որ Գեորգի Գ-ի գեմ ուղղված գինված պայքարի ուղին էին բռնել այն իշխանները, որոնք թշնամացել էին 1156 թ. գահ բարձրացած Գեորգիի հետ ու հեռացել Վրաստանից, ուստի նրանց փախուստի տարի ենք համարում 1156 թվականը։

գտնել շրջակա մահմեդական ամիրայություններում²⁹։ Գրիգոր Երեցի վկայությունը հաստատում է, որ Գեորգի Գ-ի գահակալությունը տեղի է ունեցել ներքաղաքական բուռն պայքարի պայմաններում։ Վասակին հետևելով փախուստի էին դիմել և այլ իշխանական ընտանիքներ։ Մրվանի որդիները անգամ դեսպի վրաստան էին առաջնորդում թշնամու բանակը³⁰։ Դարձյալ Մ. Գոշի «Աղվանից ժամանակագրությունից» ենք տեղեկանում, որ Վասակի մահից հետո նրա իշխանությունը անցել է կրտսեր եղբորը՝ Քրդին³¹։ Անհայտ է, թե ինչքան ժամանակ է մնացել Քուրդը Կարինում, գիտենք միայն, որ 1176—1177 թթ. նա նորից Բերիսիսի քաղաքապետն էր՝ ամիրան, և եռանդուն մասնակցություն էր բերում Օրբելիների ապստամբության ճնշմանը։ Ակադ. Ս. Երեմյանը կարծում է, որ ապստամբության պարտությունից հետո Ամիր-Քուրդը նորից է հեռացել Կարին՝ վերավորված իր ծառայությունների դիմաց համապատասխան հատուցում չստանալուց և Սարգիս Զաքարյանի օգնությամբ վերականգնվել է իր նախկին պաշտոնում միայն 1185 թ., Թամարի օրոք³²։ Ամիր-Քրդի երկրորդ անգամ Կարին գնալու մասին որևէ գրավոր վկայություն հայտնի չէ, սակայն այսպես ենթադրելու համար կարող է հիմք ծառայել Կ. Գանձակեցու տեղեկությունը. «Ապա դարձ եղև իշխանին Քրդին ի հայրենիսն իւր գալ յաշխարհն Կայենոյ և Մահկանաբերդոյ։ Եւ բաղում մեծարանս եդ նմա թագուհին Վրաց, որ Թամարն կոչէր, դարձուցանելով ի նա ղհայրենի տեղրսն և ալլս յոլովս»³³։ Ստացվում է այն տպավորությունը, որ

29 Պատմիչի «տրացող» որակումը չպետք է հասկանալ սովորական իմաստով՝ հավատու-
րաց, բանի որ Մ. Գոշը վկայում է Վասակի թաղվելու մասին Կարինի Աստվածածին եկեղե-
ցում, Ուրանայր ալստեղ նշանակում է մերժել, հեռանալ, դավաճանել:

30 Միջնադարում բավական տարածված այս երևույթի մասին տե՛ս նաև, Եղվ. աղյւս., էջ 107:

31 «Հայապատում», հ. Բ, էջ 390: վասակը, Քուրդը և Սարգիսը առաջին ներկայացուցիչներն են այն նշանավոր տոհմի, որոնց գործունեությունը քիչ թե շատ լուսաբանված է աղբյուրներում: Հայ պատմիչները այս տոհմի ամենանշանավոր ներկայացուցիչն, Ամիր-Քրդի ծոռ Սազուն Բաթրեկյան, անվանում են Արծրունի ([Գ Ր Ի Գ Օ Ր Ա Կ Ն Ե Ր Ե Յ Ի], Պատմութիւն վասն ազգին նետողաց, Պետերբուրգ, 1870, էջ 28, 34, Մ խ Ի Թ ա Ր Ա յ Ի Վ ա ն Ե ց Ի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 68), ուստի գիտական գրականությունում Ամիր-Քրդի սերունդները ստացել են Մահկանաբերդի Արծրունիներ անունը: Ակադ. Ի. Հավախիշվիլին նկատի առնելով, հավանաբար, Քուրդ անունը՝ նրան և նրա սերնդին համարել է Հայացածք քրդեր (ՈՅ. ԶՁՎՅԵՆՈՅՈՒԼ, յնթադրումը ցույց ունեցող, Ծ. III, տժ., 1966, թ. 367): Միայն այս հիմամբ արված եզրակացությունը, իհարկե, անընդունելի է: Միջնադարում Հայոց մեծ բավական տարածված Քուրդ անունը հանդիպում է դեռևս VIII դարում, այն էլ Մամիկոնյանների, Սյունիների և Ամատունիների իշխանական տոհմերում (Հ. ԱճՈՂԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 223—226), որոնց քրդական ծագման մասին խոսելը անիմաստ կլինի: Ամիր-Քրդի կրտսեր եղբայր Ամիր Սարգիսը և յուր որդի Խավաթսը ԺԳ դարի սկզբում ծառայության էին մտել Քրդի և Սարգսի քրոջ որդու՝ Զաքարիա ամիրսպասալարի և նրա ժառանգների մոտ («Միշտատեղարանք ձեռագրաց», էջ 657—658, 885—888): Նրանց սերունդների մասին տե՛ս Դ. ՀՈՎԱՆԵՍԻԱՆ, Նիւթեր և ուսումնասիրութիւններ..., Ա, էջ 16—18:

³² С. Т. Еремян, Юрий Боголюбский в армянских и грузинских источниках, («Научные труды ЕГУ», т. XXIII, 1946, стр. 399). Հմմտ. Հ. Ջանիփուլյան, Միհրաբ Գաբրիել և նոր Գեորգի վանքը (Աշխատություններ Հայաստանի պատմական պետական թանգարանի, Հ. 1, Երևան, 1948, էջ 109, ծան. 2), նաև՝ Խ. Մաթևոսյան, Կայան բերդի և գավառի տեղագրությունը (Արարատ, 1972, № 2, էջ 57):

33 Կ. Գ ա ն ձ ա կ ե ճ ջ ի, նշվ. աշխ., էջ 209: Անկասկած այս տեղեկության վրա է հիմնվում Շ. Մեսխիան, երբ պնդում է, որ Ամիր-Քուրդ Արծրունին, Սարգիս Զաքարյանի կնոջ

որևէ աչքի ընկնող ծառայության դիմաց, Հայտնի է, որ 1177 թ. վրացական եկեղեցին կարողացավ օգտվել թագավորի ժամանակավոր թուլությունից և հատուկ հրովարտակով հարկերից ազատ լինելու իրավունք ստացավ³⁷։ Այս հրովարտակը, հավանաբար, տարածվել էր նաև հայկական այն վանքերի վրա, որոնք գտնվում էին Օրբելիների ապստամբության ժամանակ Գեորգի Գ-ին օգնող հայ իշխանների հովանավորության ներքո։ Այս իրողության համար իբրև փաստարկ կարող է դիտվել նաև այն, որ Սանահնի վերոհիշյալ 1181 թ. արձանագրությունում ևս հիշվում է հայկական եկեղեցիների՝ հարկերից ազատվելու մասին։ Հետևաբար, Մորո Ձորո վանքի վերոհիշյալ արձանագրությունները փորագրված են 1177 թ. հետո և մինչև Գեորգի Գ-ի մահը, այսինքն՝ 1177—1184 թթ. ընթացքում։

Եվ, վերջապես, Քուրդ ամիրան ձղոնդիդե-մծիգնոբարթուխուցես Անտոնի (արքունի առաջին պաշտոնյայի) և Սարգիս Զաքարյանի հետ միասին հիշատակվում է 1184 թ. Հաղարծնի հայտնի արձանագրությունում³⁸։ Այսպիսով, Ամիր-Քուրդը, իբրև Բբիլիսիի քաղաքագետ և ժամանակի ազդեցիկ քաղաքական դեմք, 3—4 տարվա կարճատև ընդմիջումներով հիշվում է ժամանակակից աղբյուրներում (1177, 1181, 1184 թթ.), ուստի կարելի է եզրակացնել, որ նա 1177 թ. հետո չէր հեռացել Կարին, այլ առնվազն այդ թվականից սկսած վարում էր Բբիլիսիի ամիրայի պաշտոնը, պահպանելով և՛ դիրքը, և՛ տիրույթները։ Անհայտ է, թե մինչև ո՞ր թվականն էր Ամիր-Քուրդը շարունակում մնալ իր պաշտոնում, Թամար թագուհու առաջին պատմիչի «Թագակիրների պատմությունն ու ներքողյանը» երկից հայտնի է միայն, որ 1185 թ. սկզբում³⁹ «Քարթլիի և Բբիլիսիի ամիրան» էր Աբուլասանը⁴⁰։ Ակադ.

³⁷ Ժառտղև Նամատլոնի փոխգրք, Ե. II, տծ., 1965, թ. 24—25.

³⁸ С. Т. Еремян, Агарцинская надпись 1184 г. («Исследования по истории культуры народов Востока». Сборник в честь академика И. А. Орбелни, М.—Л., 1960, стр. 78—87). Բ. Մետրեվելի (նշվ. աշխ., էջ 162—163), հիմնվելով պրոֆ. Ե. Մետրեվելի անտիպ աշխատության վրա, կասկածի տակ է առնում Ամիր-Քուրդի հիշատակությունը Հաղարծնի արձանագրությունում և կարծում է, թե «ամիրա» տիտղոսը վերաբերում է Սարգիս Զաքարյանին (հմտ. նաև՝ Յ. Դ. Դարչանյան, Армянские лапидарные надписи как источник истории Грузии (XII—первая треть XIII в.), автореферат канд. дисс., Тб., 1975, стр. 18)։ Նման ուղղման համար փաստարկ չի կարող ծառայել այն հանգամանքը, որ 1184 թ. Սարգիսը դեռևս ամիրապետար չէր, հետևաբար արձանագրությունում այդ տիտղոսով հիշվել չէր կարող։ Իրականում այստեղ արտասովոր ոչինչ չկա. Սարգիսը ամիրապետար է հիշվում նաև հենց 1181 թ. Սանահնի արձանագրությունում և այս երևույթը դիտվել ու համապատասխանաբար մեկնաբանվել է ակադ. Զ. Մանանդյանի կողմից (տե՛ս Զ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 126)։ Փոխարենը ոչ մի տեղ չի վկայված Սարգիսի «ամիրա» տիտղոսը, քանի որ կարելի է միայն ենթադրել նրա ամիրայությունը Անիում, սակայն այդ կարճատև պաշտոնավարությունը բավական չի եղել, որպեսզի աղբյուրներից գոնե մեկը հիշատակի նրան իբրև Սարգիս։

Ակադ. Ս. Երեմյանի գիտական հրատարակությունից հետո Հաղարծնի արձանագրության որևէ ճշտում առաջարկելիս անհրաժեշտ էր իրական կովաններ պրպտել. նախորդ հրատարակիչների սխալաշատ վերծանությունները վկայակոչելը անբավարար է հստակորեն ընթերցվող Քուրդ անունը ոչ իրական համարելու համար։

³⁹ Ըստ նորագույն ժամանակագրության Թամարի առաջին ամուսնությունը տեղի է ունեցել 1185 թ. գարնանը (П. М. Мурадян, К хронологии некоторых событий в Грузии и Армении конца XII в., «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 133—134), հետևաբար, պետական խորհրդի նիստը, որտեղ հանդես գալու կապակցությամբ հիշվում է Աբուլասանը, տեղի է ունեցել 1185 թ. սկզբին։

⁴⁰ Ժ. Ս., Ե. II, թ. 36.

դ(ա)սպա[նց]* Մարծպանի, տվաք ՂՄանթշա կէսն...»⁴⁹։ Սակայն, նախ՝ առաջին անվան հետ դրված «ս» դիմորոշ հոգը անհավանական է դարձնում «Քուրդ» ե «Հասան» անունները միասին կարգալու ենթադրությունը, ապա՝ դժվար թե Ամիր-Քուրդը կարող էր ընդհանուր նվիրատվություն անել այլ՝ Մամիկոնյան-Համազասպյան տոհմի իշխանների հետ, առանց այդ հանդամանքը որևէ կերպ նշելու⁵⁰։ Այսպիսով, ԺԲ դարի վերջին Հյուսիսային Հայաստանում գործում էին երեք տարբեր՝ Մահկանաբերդի Արծրունիների, Ութանանց և Մամիկոնյան-Համազասպյան տոհմերի պատկանող Քուրդ անունով իշխաններ։

Վերջերս հայտնվեց այն կարծիքը, որ Ամիր-Քուրդը հիշվում է նաև Սեվանի շրջանի Դամաշեն գյուղի մոտ գտնվող հետևյալ անթվակիր արձանագրությունում. «... դին իշխանաց իշխանին և մանգատուրտուխուցիսին, որդոյ Հասանայ Կայենեցո, շինեցի դհոգետունս ի մէջ լեռանց ի ոտս փուսա հաստատ հայրենիցս մեր Կայենի և կանգնեցի ղսուրբ խաչս վասն արեւատութեան և վասն երկարկենդանութեան ինձ և զաւակաց իմոց, յիշեցէք»⁵¹։ Հիշյալ կարծիքի հեղինակը արձանագրության սկիզբը վերականգնում է՝ «[Քր]դին իշխանաց իշխանին և մանգատուրտուխուցիսին որդոյ, Հասանայ Կայենեցո...» և եզրակացնում, որ Ամիր-Քուրդը եղել է Ստ. Օրբելյանի և Վարդանի Պատմություններից հայտնի Հասան Կայենեցու հայրը, այս պատճառով էլ Ամիր-Քուրդը վրացական աղբյուրներում հիշվում է իբրև «Աբուլասան», այսինքն՝ Հասանի հայր։ Հայտնի է, որ Հասան Կայենեցին մասնակցում էր Օրբելիների ապստամբությանը, ուստի ենթադրվում է, որ 1177 թ. հետո Ամիր-Քուրդի շնորհազրկումը և հեռանալը Կարին, նրա Հասան որդու ապստամբելու արդյունքն էր⁵²։ Արձանագրության հանգամանալից քննությունից, սակայն, կարելի է այլ եզրակացությունների հանգել։

Արձանագրության բանաձևային մասից, ցավոք, պահպանվել են միայն «... դին իշխանաց իշխանին և մանգատուրտուխուցիսին որդոյ Հասանայ Կայենեցո» բառերը և դժվար է համոզված ասել՝ «դին»-ը անպայման որևէ անվան վերջին մասն է և ոչ՝ մեկ այլ բառ։ Սակայն, եթե անգամ «դին»-ը ընդունենք իբրև անձնանվան վերջավորություն և բոլոր հնարավոր անուններից ընտրենք «Քուրդ»-ը, դարձյալ անկարելի է Ամիր-Քուրդին Հասան Կայենեցու հայր համարել։ Որդոյ Հասանայ Կայենեցո» արտահայտությունը պարզորոշ ցույց է տալիս, որ արձանագրությունում հիշված իշխանաց իշխանը Հասանի

* Սրբագրությունս առաջարկել է վիմագողգեստ Ս. Ավագյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում։

49 Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 105—106, հմմտ. С. Т. Еремеев, նշվ. աշխ., էջ 409։

50 Ուսումնասիրողները արձանագրությունում հիշված նվիրատուներին իրավացիորեն համարում են Մամիկոնյան-Համազասպյանների ընտանիքի անդամ եղբայրներ։ Տե՛ս Ա. Շահինյան, Մամիկոնյան-Համազասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII—XIII դարերում («Լրաբեր», 1968, № 3, էջ 92), Հ. Քյուրտյան, Դիտողություններ «Մամիկոնյան-Համազասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII—XIII դարերում» հոդվածի մասին («Լրաբեր», 1971, № 5, էջ 95)։

51 Վ. Հ ա դ ու թ յ ու ն յ ա ն, Միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետությունը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 8, էջ 80), ն ու յ ն ի՝ Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 46, լուսանկար՝ էջ 45։ Արձանագրության վերծանությունը հեռու է վերջնական համարվելուց։

52 Ռ. Մ ա թ ե ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 56—57։

Սակալն նա ե՞րբ կարող էր տիրել Կայանին: Քաջ հայտնի է, որ 1176—1177 թթ. Կայանին դեռևս տիրում էր Հասան Կայանեցին, բայց նա, ինչպես և Օրբելիները, ապստամբելու համար պետք է ղրկված լիներ տիրույթներից: Մինչև 1191 թ. Կայանի տերը Վարդան Դադիանին էր, որը կորցրեց բերդը Գեորգի Ռուսի (Յուրի Բոգոլյուբսկի) ապստամբությանը (1190—1191) մասնակցելուց և շնորհազրկվելուց հետո. այս ժամանակ էր, որ բերդը հանձնվեց նրա փոխարեն մսախորթուհուցնա նշանակված Իվանեին⁹³. Վարդան Դադիանիի հայրենի կալվածքները Արևմտյան Վրաստանում էին, ուստի կարելի է եզրակացնել, որ նա Կայանը ստացել էր 1185 թ. մսախորթուհուցների պաշտոնում Ափրիդոնին փոխարինելիս, այնպես, ինչպես ամիրսպասալար դարձած Սարգիսը ստացավ Լոռեն: Այսպիսով, մինչև 1176—1177 թթ. Կայանի տերը Հասան իշխանն էր, 1185—1191 թթ.՝ Վարդան Դադիանին, 1191 թ. հետո՝ Իվանե Զաքարյանը: Որևէ գրավոր աղբյուր չի վկայում, որ Ամիր-Քուրդը տիրում էր Կայանին ռազատ մնացած» 1177—1185 թթ.: Ե՛վ Վարդանը, և՛ Իվանեն ստացել էին բերդը մսախորթուհուցների պաշտոնը ստանձնելիս, ուստի կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ 1177 թ. ևս Կայանը, իբրև պատիժ Հասանից խլվելով, հանձնվել էր ապստամբությունից հետո մսախորթուհուցնա դարձած Ափրիդոնին:

Լուրջ կասկածներ է հարուցում նաև Ամիր-Քրդի՝ Հաղբատի տեր լինելու մասին գոյություն ունեցող կարծիքը: Գ. Հովսեփյանը այս մասին գրում է. «Նրա (Ամիր-Քրդի—Ն. Մ.) և նրա որդոց ժառանգությունն էր նաև Հաղբատը»⁸⁰, սակայն նրա վկայակոչած արձանագրությունները⁸¹ հաստատում են հայագետի առաջ քաշած դրույթի միայն երկրորդ մասը: Ամիր-Քրդի ծոռ Սագուն աթաբեկը իրոք հայտնի էր իբրև ասէր Հաղբատայ՝ մեծ և հռչակաւոր սրբոյ ուխտին»⁸², Հաղբատում է թաղված ինքը՝ Ամիր-Քուրդը, սակայն Մահ-կանաբերդի Արծրունիների ամենամեծ հզորության ժամանակաշրջանի իրողությունը շուրջ մեկ դար առաջ տանելը չի կարելի վերջնականապես հիմնավորված համարել:

Ինչպես տեսանք, Ամիր-Քուրդ Արծրունին ամիրայության պաշտոնում վերջին անգամ հիշվում է 1184 թ., իսկ 1185 թ. սկզբին Թբիլիսիի քաղաքապետը արդեն Աբուլասանն էր: Ամիր-Քուրդի պաշտոնանկությունը, հավանաբար, տեղի է ունեցել 1184—1185 թթ., երբ փոփոխությունների ենթարկվեց

հրամանաւ Իւանէի բեռորդոյ մեծի իշխանին Քրդին, որոյ հրամանաւ եկեալ իսկ էր յերկիրն Կայանոյ ի Հինն կոչեցեալ Գետիկ՝ զի յայնմ ժամանակի նա ունէր զԿայն հայրենեօք ի Հասանայ Կայանեցոյ՝ շինող բերդինս (էջ 184), որը առաջին հայացքից այն տպավորութիւնն է թողնում, թե Կայանին Հասանից հետո տիրում էր Քուրդը, թեև պատմիչը նկատի ունի Իվանեհին։ Գ. Հովսեփյանը վկայակոչում է նաև Ստ. Օրբելյանի Պատմութիւնը (էջ 384) և Մ. Բարխուդարյանի հրատարակութեամբ իրեն ծանոթ Մորո Ձորո վանքի արձանագրութիւններից մեկը (Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պռնշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 3, ապա Ստ. Օրբելյան Կայանի մասին հայտնում է միայն այն, որ 1176—1177 թթ. ծախսամբների թվում էր և Հասան Կայանեցին, իսկ Մորո Ձորո վանքի արձանագրութիւնում հաղորդվում է Գեորգի Գ-ի կողմից հրովարտակի շնորհման մասին և ոչ այնպիսի։

⁵⁰ ქ. ც. ც. II, გვ. 49, 51, 54, წმწთ. იგ. ჯაგახიშვილი, *ნაშ. აქტ.*, ტფ 262—263.

60 Գ. Հոսիսի 1 ա ն, նշվ. աշխ., էջ 3, ծան. 6:

⁶¹ Ս. Զալալյանց, Հանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփլիս, 1842, էջ 70—71:

62 [Գ Ր Ի Ք Ո Ր Ա Կ Ն Ե Ր Գ Ի], Պատմութիւն վասն աղգին նետողաց, էջ 28.

ողջ արքունական պաշտոնեությունը⁶³։ Թեև Քուրդ իշխանի ամիրա տիտղոսը արձանագրված է Հաղբատում գտնվող նրա տապանաքարի վրա⁶⁴, այնուամենայնիվ այս ավելի շուտ պետք է համարել տուրք ավանդույթին, քան Ամիր-Քրդի՝ մինչև կյանքի վերջը քաղաքապետ լինելու վկայություն։ Նա, հավանաբար, վախճանվել է ԺԲ դարի 90-ական թվականներին, քանի որ Կ. Գանձակեցին Նոր Գետիկի շինության ավարտի կապակցությամբ հիշատակում է միայն նրա որդիներին և դստերը՝ Արդու խաթունին⁶⁵։ Իրոք, վերջինս Նոր Գետիկի կառուցման ավարտատարում (1197 թ.) գրված արձանագրությունում արդեն պատարագ է սահմանում հոր համար⁶⁶։

Այսպիսով, հայկական և վրացական աղբյուրների հետազոտությունը հնարավորություն է ընձեռում հետևելու այն պայքարին, որը մղվում էր ամիր-սպասալարության պաշտոնի և կոռեի տիրակալության շուրջ ԺԲ դարի երկրորդ կեսում։ Կարելի է ենթադրել, որ այն սկսվել էր ավելի շուտ և ծավալվել հիմնականում Օրբելիների և Աբուլեթիսձենների տոհմերի միջև։

1176—1177 թթ. ապստամբության ճնշումից հետո Հյուսիսային Հայաստանում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ. Օրբելիները կորցրեցին իրենց առաջնային դիրքը և աստիճանաբար նրանց փոխարինեցին նախկին վասալները՝ Զաքարյանները։

ԺԲ դարի նշանավոր քաղաքական գործիչ Ամիր-Քուրդ Արծրունու կյանքի և գործունեության ուսումնասիրությամբ լուսաբանվում են Մահկանաբերդի Արծրունիների իշխանական տան վաղ շրջանի պատմության մի քանի հարցեր։

МЕЖФЕОДАЛЬНАЯ БОРЬБА ПРИ ГЕОРГИИ III И АМИР-КУРД

А. Г. МАРГАРЯН

Резюме

Армянские и грузинские источники дают возможность проследить за ходом борьбы, возникшей во второй половине XII в. между разными семействами феодалов и отдельными князьями вокруг поста амирспасалара и за владения с центром в Лорэ. В 70-ых гг. должность амирспасалара и главенствующее положение в Северной Армении занимали представители рода Орбели. Однако после возглавляемого ими восстания 1176—1177 гг. они лишились своих былых позиций. Их преемниками оказались Захариды, которые за короткий период из вассалов князей Орбели превратились в могущественных владетелей края. В подавлении восстания большую роль сыграл амир города Тбилиси Курд. Последние страницы статьи посвящены жизни и деятельности Амир-Курда.

⁶³ Տե՛ս Մ. Թեյսնոն, տաճարի շինարարական օրագրի ծանոթացում, Երևան, 1971, թ. 130—147.

⁶⁴ Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 188։

⁶⁵ Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 215։

⁶⁶ Զ. Զանգրուկյան, նշվ. աշխ., էջ 118։